Ութերորդ հաղորդում

Դավթի սերմը դառնում է Աստծու Որդին

Գրվածքների ընթերցում. Բ Թգ 7:12ա, 14ա, Մտթ 22:41-45,
Գրծ 13:23, 33, Հռմ 1:3-4, 8:29, Հյտ 22:16

I. «Քեզնից հետո քո սերմը պիտի բարձրացնեմ.... Ես նրա Հայրն եմ լինելու, և նա Իմ որդին է լինելու»՝ Բ Թգ 7:12ա, 14ա.

Ա. «Քո սերմը» արտահայտությունն այստեղ տառացիորեն վերաբերում է Սողոմոնին՝ Դավթի որդուն՝ Գ Թգ 5:5, 8:15-20:

Բ. Եբր 1:5բ-ի համաձայն, որը մեջբերում է Բ Թգ 7:14ա խոսքը, Դավթի սերմն իրականում Քրիստոսն է՝ որպես Աստծու անդրանիկ Որդին, ով ունի և՛ աստվածայնություն, և՛ մարդկայնություն՝ Եբր 1:5ա, 6:

Գ. Բ Թգ 7:12ա-ում «քո սերմը» և 14ա-ում «Իմ որդի» արտահայտությունները ենթադրում են, որ Դավթի սերմը դառնալու էր Աստծու Որդին, այսինքն, որ մարդկային սերմը դառնալու էր աստվածային Որդի՝ Հռմ 1:3-4:

Դ. Դավթի սերմի՝ Աստծու Որդին դառնալու վերաբերյալ այս խոսքը որոշակիորեն շարունակվում և զարգանում է Նոր Կտակարանում՝ Մտթ 22:41-45, Հյտ 22:16:

II. Մտթ 22:41-45-ում Տեր Հիսուսը տվեց տիեզերքի մեծագույն հարցը. «Քրիստոսի վերաբերյալ ի՞նչ եք մտածում, Նա ո՞ւմ որդին է»՝ խ. 42ա.

Ա. Փարիսեցիներն ասացին, որ Քրիստոսը Դավթի որդին է, իսկ Տերը նրանց հարցրեց, թե Դավիթն ինչպես կարող էր Քրիստոսին Տեր կոչել, եթե Քրիստոսը նրա որդին էր՝ խխ. 43-45:

Բ. Մենք Քրիստոսին կարող ենք ճանաչել միայն մեր հոգում Աստծու հայտնության միջոցով՝ խ. 43, Եփս 3:5:

Գ. Քրիստոսն Աստված է. Իր աստվածայնության մեջ Նա Դավթի Տերն է՝ Մտթ 22:43:

Դ. Քրիստոսը նաև մարդ է. Իր մարդկայնության մեջ Նա Դավթի որդին է՝ խխ. 42, 45:

III. Հյտ 22:16-ում Տեր Հիսուսն ասաց. «Ես եմ Դավթի Արմատն ու Սերունդը».

Ա. Իր աստվածայնության մեջ Քրիստոսը Դավթի Արմատն է՝ ակունքը, իսկ Իր մարդկայնության մեջ Քրիստոսը Դավթի Սերունդն է՝ նրանից ելած:

Բ. Քրիստոսը Տերն է որպես Դավթի Արմատը, և Նա նաև Դավթի որդին է՝ շառավիղը, որպես Դավթի Սերունդը. ճիշտ ինչպես «Դավթի Սերունդը» արտահայտությունն է ցույց տալիս, որ Տերը մարդ է, և որ Նա ելել է Դավթից, այնպես էլ «Դավթի Արմատը» արտահայտությունն է ցույց տալիս, որ Նա Աստված է, և որ Դավիթն է ելել Նրանից:

Գ. Հյտ 22:16-ում Քրիստոսն Ինքն ընդունեց, որ մարդ է, ինչպես նաև Աստված, որ ունի և՛ մարդկային բնություն, և՛ աստվածային բնություն:

IV. Գործ 13-ում Պողոսն ասաց, որ Դավթի սերմից «Աստված, խոստման համաձայն, Իսրայելի համար Փրկիչ բերեց՝ Հիսուսին» (խ. 23), և որ «այդ խոստումն Աստված լիովին կատարեց.... հարուցանելով Հիսուսին, ինչպես և երկրորդ Սաղմոսում է գրված. «Դու Իմ Որդին ես, Ես այս օրն եմ Քեզ ծնել»» (խ. 33).

Ա. 32 և 33-րդ խոսքերում տեսնում ենք, որ Քրիստոսը՝ որպես Աստծու Անդրանիկը, խոստացվել էր հայրերին, և Աստված կատարեց այդ խոստումը՝ Հիսուսին հարուցանելով:

Բ. Հարությունը ծնունդ էր Հիսուս մարդու համար.
1. Նա Իր հարության մեջ Աստծուց ծնվեց և դարձավ Աստծու անդրանիկ Որդին բազում եղբայրների մեջ՝ Հռմ 8:29:
2. Նա հավիտենությունից Աստծու միածին Որդին էր՝ Հվի 1:18, 3:16:
3. Իր մարմնացումից հետո հարության միջոցով Նա Աստծուց ծնվեց Իր մարդկայնության մեջ և դարձավ Աստծու անդրանիկ Որդին՝ Եբր 1:6:

Գ. Պողոսը Սղմ 2:7-ում կարողացավ տեսնել Տիրոջ հարությունը. «Դու Իմ Որդին ես, Ես այս օրն եմ Քեզ ծնել».
1. Պողոսն «այսօր» բառը կիրառեց Տիրոջ հարության օրվա նկատմամբ:
2. Սա նշանակում է, որ Քրիստոսի հարությունը Նրա՝ որպես Աստծու անդրանիկ Որդու ծնունդն էր:
3. Հիսուսը՝ Մարդու Որդին, ծնվեց որպես Աստծու Որդին՝ մեռելներից հարուցանվելով. ուստի Աստծու՝ Հիսուսին մեռելներից հարուցանելը Նրան Իր ծնելն էր որպես Իր անդրանիկ Որդու՝ Գործ 13:33:

Դ. Մարմնացման միջոցով Աստծու միածին Որդին մարդկայնություն հագավ և Աստվածամարդ դարձավ (Հվի 1:14, 18, Ղկս 1:35). այնուհետև հարության մեջ այս Աստվածամարդն Աստծուց ծնվեց՝ դառնալով Նրա Անդրանիկը (Գործ 13:33, Եբր 1:6, Հռմ 8:29).
1. Նախքան մարմնացումը Աստծու միածին Որդին մարդկային բնություն չուներ. Նա միայն աստվածային բնություն ուներ:
2. Հարության մեջ Աստծու անդրանիկ Որդին ունի մարդկային բնություն, ինչպես նաև աստվածային բնություն:

Ե. Իր հարության միջոցով Քրիստոսը ծնվեց որպես անդրանիկ Որդին ու միևնույն ժամանակ բոլոր Նրա հավատացյալները ծնվեցին որպես Աստծու բազում որդիները՝ Ա Պտ 1:3, Եբր 2:10.
1. Այս բազում որդիների մեջ միայն Անդրանիկն է Աստծու միածին Որդին՝ Հվի 1:18, Ա Հվի 4:9:
2. Իր հարուցանված մարդկայնության մեջ Աստծու այս միածին Որդին նաև Աստծու անդրանիկ Որդին է՝ Հռմ 8:29:
3. Անդրանիկն ունի և՛ աստվածայնություն, և՛ մարդկայնություն, և մենք՝ Նրա հավատացյալներս՝ որպես Աստծու բազում որդիներ, նույնպես ունենք և՛ մարդկային բնություն, և՛ աստվածային բնություն՝ Բ Պտ 1:4:

V. Մենք պետք է ճանաչենք Քրիստոսին Իր հարության մեջ, ով զորությամբ Աստծու Որդի սահմանվեց՝ Իր մարդկային բնությամբ հանդերձ՝ Հռմ 1:3-4.

Ա. Նախքան Իր մարմնացումն ու հարությունը Քրիստոսն Աստծու Որդին էր՝ միածին Որդին՝ Հվի 1:18, 3:16:

Բ. Թեև նախքան մարմնացումը Քրիստոսն արդեն Աստծու Որդին էր, Նա դեռ պետք է հարությունից սահմանվեր որպես Աստծու Որդի, որովհետև մարմնացման միջոցով Նա մարդկային բնություն էր հագել, որն աստվածայնության հետ ոչ մի առնչություն չուներ՝ 1:1, 14, Հռմ 8:3.

1. Երբ Աստծու Որդին մարմնացավ, Նրա աստվածային բնությունը ծածկվեց մսեղիով:
2. Քրիստոսն արդեն Աստծու Որդին էր Իր աստվածայնության մեջ, բայց Նրա այն մասը, որը Հիսուսն էր՝ մարդկային բնությամբ հանդերձ՝ Մարիամից ծնված, դեռևս Աստծու Որդին չէր՝ Ղկս 1:31-32, 35:
3. Իր հարությամբ Քրիստոսը սրբացրեց և բարձրացրեց Իր մարդկային բնությունը՝ Իր մարդկայնությունը, և Նա հարությունից սահմանվեց Աստծու Որդի՝ այս մարդկային բնությամբ հանդերձ. այս իմաստով Նա հարության մեջ ծնվեց որպես Աստծու Որդի՝ Հռմ 1:3-4, Գրծ 13:33, Եբր 1:5:
4. Աստծու Որդու այս սահմանումը «զորությամբ» էր՝ Քրիստոսի հարության զորությամբ, որի իրականությունը Հոգին է՝ Հռմ 1:4, Փլպ 3:10, Եփս 1:19-20:

Գ. Հարության մեջ սահմանվելու միջոցով Քրիստոսը, ով արդեն Աստծու Որդին էր նախքան Իր մարմնացումը, Աստծու Որդին դարձավ նոր կերպով՝ Հռմ 1:4.

1. Նախքան Իր մարմնացումը Նա Աստծու Որդին էր միայն աստվածայնությամբ. Իր հարության միջոցով Նա Աստծու Որդի սահմանվեց և՛ աստվածայնությամբ, և՛ մարդկայնությամբ՝ խ. 4:
2. Եթե Քրիստոսը մարդկային բնություն հագած չլիներ, Նրա՝ Աստծու Որդի սահմանվելու կարիքը չէր լինի, որովհետև Իր աստվածայնության մեջ Նա արդեն Աստծու Որդին էր դեռ հավիտենությունից՝ Հվի 1:18, 17:5:
3. Մարմնացման միջոցով մարդկայնություն հագած լինելով՝ Նա հարության մեջ սահմանվեց որպես Աստծու Որդի՝ իր մարդկայնությամբ հանդերձ՝ 1:14, Հռմ 8:3, 1:3-4, Եբր 2:14.
   ա. Որպես սահմանված Աստծու Որդին՝ Քրիստոսը երկու բնություն ունի՝ աստվածայնություն և մարդկայնություն. մարդկայնությունը, որ նա այժմ ունի, ոչ թե բնական մարդկայնությունն է, այլ հարության մեջ բարձրացված մարդկայնությունը՝ Հռմ 1:4:
   բ. Նույնիսկ Քրիստոսի մարդկային բնությունն է սահմանվել Աստծու Որդի, որովհետև Նա Աստծու Որդի է սահմանվել և՛ աստվածայնությամբ, և՛ մարդկայնությամբ:

Դ. Քրիստոսի՝ մարդկայնությամբ հանդերձ, որպես Աստծու Որդի սահմանվելը «ըստ սրբության Հոգու էր»՝ խ. 4.

1. Սրբության Հոգին Տեր Հիսուսի ներսում եղող կյանքի էությունն է. երբ Նա ապրում էր երկրի վրա մսեղիում, Իր ներսում ուներ այս էությունը՝ Մտթ 1:18, 20, Ղկս 1:35:
2. Երբ Տեր Հիսուսը հարուցանվեց մեռելներից, Նա հարության միջոցով զորությամբ Աստծու Որդի սահմանվեց ըստ սրբության Հոգու, որն Իր մեջ էր՝ Հռմ 1:4:
3. Այժմ Նա Աստծու Որդին է առավել հրաշալի կերպով, քան նախկինում, որովհետև այժմ Նա ունի և՛ աստվածային բնություն, և՛ հարուցանված, փոխակերպված, բարձրացված, փառավորված և սահմանված մարդկային բնություն՝ 6:4, Ղկս 24:26, Հվի 17:5, Գրծ 3:13:

Ե. Մենք պետք է կապակցենք Հռմ 1:3-4 և 8:29-րդ խոսքերը.

1. Իր մարմնացման, խաչելության և հարության միջոցով Քրիստոսը՝ Աստծու Որդին, դարձավ անդրանիկ Որդին, իսկ բազում որդիները՝ Քրիստոսի եղբայրները, կերպարանակցվում են Նրա պատկերին՝ Եբր 2:10-11, Հռմ 8:29:
2. Հռմ 1:3-4-ում Քրիստոսը՝ Աստծու Որդին, նախօրինակն է, մինչդեռ 8:29-ում բազում եղբայրները նրանք են, ովքեր այս նախօրինակից ստացված «զանգվածային վերարտադրությունն» են, և ովքեր, կյանքում փրկվելով, կերպարանակցվելու են անդրանիկ Որդու պատկերին:
3. Սա մեզ բերում է աստվածացման հարցին և ենթադրում, որ Իր տնտեսության մեջ Աստծու մտադրությունը Իրեն մարդ դարձնելն է, որպեսզի Քրիստոսի մեջ մենք՝ Քրիստոսի հավատացյալներս ու Աստծու զավակներս, դառնանք Աստված կյանքով, բնությամբ և կազմությամբ (բայց ոչ Աստվածությամբ). այսպիսի ենթադրությունը ծայրաստիճան մեծ է, և ի վերջո Աստվածաշունչը հենց սրանով է ավարտվում՝ խ. 29, 1:3-4, Հվի 1:1-13, Ա Հվի 3:1, Հյտ 21:2, 10-11:

© 2021 Living Stream Ministry